



ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ

Մեր ՅԱՐՈՐԴ ԹԻՒՆ՝

ՈՒՐԲԱԹ, 20
ՅՈՒՆԻՍ 2003

«ԱՁԴԱԿ»Ի ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՅԱԽԵԼՈՒԱԾ

Բ. ՏԱՐԻ

ԹԻՒՆ 2(14)

ՄԱՅԻՍ 2003

bezdlg_mezdlg@hotmail.com

Մ ՏԱՌՆ ՈՒ ՄԱՅԻՍԸ

Բայերեն այբուբենին մէջ Մ տառը յատկանշական է: Մ-ով կը սկսին մեր կեանքին ամէնէն նուրբ ու սուրբ բառերը: Բոլոր բառերը մէկ առ մէկ պիտի չթուեն, սակայն գրութեան ընթացքին դուք պիտի հանդիպիք Մ-ով սկսող բոլոր գեղեցիկ բառերուն եւ անոնց ետին

պահուրտած պատմութիւններուն: Մայր հայրենիքին մէջ էր, որ մեծանուն մարդ մը՝ Մեսրոպ Մաշտոց, մայրենի լեզուն յաւերժացուց: Բայ մանուկներուն մաքուր մտքերուն մէջ անոր այբուբենը մեծաքանակ մայրենին իբրեւ մասունք դրոշմեց:

Մայր հայրենիքին մէջ երբ մեղմ վեփուռը կը փչէր, երբ մանուշակները մայր բնութիւնը կը վարդաբերէին, հայերը մէկ մարդու նման եւ միակամ, Մայիս ամսուն 28ին, թուրքին դէմ մարտնչելով, Մայր հայաստանի մայրաքաղաք Երեւանը փրկեցին, մեր մշակոյթը պահեցին, եւ այդպիսով հայ մանուկները անջնջելի պահեցին ազգերու մատեանին մէջ:

Բոլոր հայ մամիկներն ու մայրերը իրենց սիրելի վաւակները կռիւի դաշտ դրկեցին, իսկ մայրամուտին սպասեցին, որ անոնք մայր հողը փրկած ու յաղթական վերադառնան տուն:


Մայիս ամսուան ընթացքին վերը յիշուած բոլոր բառերուն տօները կարելի է յիշատակել: Ասիկա պէտք է մեր մատին վրայ իբրեւ մատանի պահել եւ բնաւ չմոռնալ:

Իսկ այս բոլոր տօներուն յիշատակութեան համար կ'արժէ մայրավանքին մէջ մոմ մը վառել:



Պողոս Մայեան, Զ. դասարան
Բայ Աւետ. Թորոսեան վարժարան

ԵԿԷՔ ԾԱՐԱԴՐՈՒՄԸ



Կը սիրես պատմութիւններ հնարել, երեւակայութիւնդ աշխատցնել, շարադրել...

Մասնակցէ՛ «Պատիկ-Մատիկ»ի շարադրութեան մրցումին:

- Մրցումին կրնան մասնակցիլ 4րդ, 5րդ եւ 6րդ դասարանի աշակերտներ:

- Արձանագրութիւնները տեղի կ'ունենան 9-27 Մայիս, հեռաձայնելով 01-260115 թիւին, երկուշաբթիէն Ուրբաթ օրերը, առաւօտեան ժամը 9:00էն մինչեւ երեկոյեան ժամը 5:00:

- Մրցումը տեղի պիտի ունենայ Կիրակի, 1 Յունիսին, «Յ. Տէր Մելքոնեան» թատերասրահին մէջ, առաւօտեան ժամը 10:00-12:30:

- Իւրաքանչիւր մակարդակի առաջին, երկրորդ եւ երրորդ հանդիսացողները պիտի ստանան արժեքատու նուէրներ:

- Արդիւնները պիտի յայտարարուին «Պատիկ-Մատիկ»ի Յունիսի թիւին մէջ:

- Յաւելեալ տեղեկութիւններ տեսնել էջ 6:

ԸՆՏԱՆԻՔԸ ԵՒ ՄԵՆՔ

Մեր կեանքին մէջ որքան մեծ տեղ ունին մեր ընտանիքները: Պահ մը երեւակայենք մեր կեանքը առանց ընտանիքի. հայր, մայր, քոյր - եղբայրներ, մեծ հայր ու մեծ մայր եւ այլ ազգականներ կը գուրգուրան, կ'օգնեն մէկը միւսին, իրարու հետ կը բաժնեն ուրախութիւններն ու տխրութիւնները եւ, ամէնէն կարեւորը, կ'օգնեն, որ մենք ըլլանք աւելի լաւ մարդիկ:

Աշխարհի տարածքին կան մեծ թիւով մարդիկ, որոնք տարբեր պատճառներով վրկուած են ապրել իրենց ընտանիքներուն հետ: Կան նաեւ ուրիշներ, որոնք չեն անդրադառնար, թէ ինչքան բախտաւոր են, որ իրենց ընտանիքներուն տա-

քուկ մթնոլորտը կը վայելեն: Գիտէ՞ք, թէ 15 Մայիսին ամբողջ աշխարհը կը տօնէ ՄԱԿի կողմէ հաստատուած Ընտանիքի Միջազգային Օրը:

15 Մայիսին տարբեր երկիրներու մէջ կը կազմակերպուին ընտանիքներու նուիրուած ձեռնարկներ: Իսկ Ընտանիքի Միջազգային Օրուան յանձնախումբը ամբողջ տարուան ընթացքին կը փորձէ օգնել դժուար պայմաններու մէջ գտնուող ընտանիքներուն՝ բարելաւելու իրենց վիճակը:

ملحقاً أوقاتك



ԱՅՈՒՄՈՒՆ

ԻՆՉ ԵՆ ՈՉ – ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Այս վերջին ամիսներուն թերթերուն մէջ կամ պատկերասփիւռէն յաճախ հանդիպեցանք տարօրինակ անունի մը՝ էն. Ճի. Օ. կամ Նան – Կավըրնըմէնթըլ Օրականայէշըն (ոչ կառավարական կազմակերպութիւն): Ինչ են այս կազմակերպութիւնները. ինչ է անոնց պաշտօնը:

Ոչ կառավարական կազմակերպութիւնները մարդասիրական կազմակերպութիւններ են, որոնք ստեղծուած են պատերազմներու, բնական աղէտներու եւ աղքատութեան զոհերուն օգնութիւն հասցնելու համար: Տարբեր մասնագիտութիւններու պատկանող անձեր (բժիշկներ, հիւանդապահներ, փոխադրակառքերու վարիչներ...) կ'ուղղուին դէպի աշխարհի չորս կողմերը՝ փորձելով բարելաւել մարդոց կեանքի պայմանները:

Այս կազմակերպութիւնները կ'աշխատին երկու մակարդակի վրայ: Անոնց աշխատանքը կարծ ժամանակի վրայ կրնայ ըլլալ, երբ անակնկալ տագնապներ կը պատահին՝ պատերազմ, երկրաշարժ, հեղեղ, սով, եւ մարդիկ կը կարօտին օգնութեան: Սակայն անոնք նաեւ կ'աշխատին երկար ժամանակի վրայ ճրագրուած յայտագիրներու վրայ, ինչ-

պէս՝ երաշտէ տառապող շրջաններու մէջ շինութիւն, երեխաներու գրաճանաչութիւն, մշակումի միջոցներու վարճացում եւ այլն:

ԻՆՉՈՒ ՈՉ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ

Այս կազմակերպութիւնները կախեալ չեն որեւէ կառավարութենէ: Անոնք իրենց աշխատանքները կրնան տանիլ շնորհիւ նուիրատուութիւններու եւ երբեմն կառավարութիւններու կողմէ յատկացուած օգնութիւններու:

Գիտէիր, թէ աշխարհի վրայ աւելի քան 250 միլիոն հոգի սննդական կամ բժշկական օգնութիւն կը ստանան այս կազմակերպութիւններէն:

Այս էջին մէջ պիտի գտնես ոչ կառավարական կազմակերպութիւններէն ոմանց մասին տեղեկութիւններ. երբ հիմնուած են անոնք, ի՞նչ է անոնց հիմնական կեդրոնը, ինչ է անոնց նպատակն ու առաքելութիւնը:

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉ

Երբ.– 1863:

Ուր.– Ժընևե, Զուիցերիա:
Նպատակ.– Յատկապէս



պատերազմներու եւ բռնութիւններու զոհերու կեանքը պաշտպանել եւ անոնց բժշկական ու ընկերային օգնութիւն հասցնել:

ՄԷՅՎ ՏՐ ԶԻԼՏՐԵՆ

Երբ.– 1932:

Ուր.– Լոնտոն, Անգլիա:
Նպատակ.– Աշխատիլ մանուկներու իրաւունքներուն համար՝ բարելաւելով անոնց կեանքի պայմանները: Կազմակերպութիւնը կ'աշխատի անմիջապէս եւ երկար ժամանակի ընթացքին իրականանալիք ճրագիրներու վրայ:



ՔԷՐ

Երբ.– 1945:

Ուր.– Աթլանթա, Ճորճիա, Միացեալ Նահանգներ:



Նպատակ.– Պայքարիլ աղքատութեան դէմ, օգնել աշխարհի ամէնէն աղքատ շրջաններուն՝ բարելաւելու իրենց կեանքի պայմանները:

ՍԷՋՕՊԷԼ

Երբ.– 1976:

Ուր.– Քեսրուան, Լիբանան:



Նպատակ.– Օգնել հաշմանդամ երեխային՝ բարելաւելով անոր կեանքի պայմանները, ինչպէս նաեւ թիկունք կանգիլ անոնց ընտանիքներուն:

ԱՐՔԱՆՍԻԷԼ

Երբ.– 1984:

Ուր.– Պէյրուս, Լիբանան:



Նպատակ.– Օգնել դժուար պայմաններու մէջ գտնուողներուն (երիտասարդներ, հաշմանդամներ եւ այլն) բարելաւելու իրենց կեանքի պայմանները եւ կարելի եղածին չափ անկախօրէն կարենալ իրենց կեանքը ապրելու:

ICRC

Save the Children

care

arcenciel

ԼՈՒՐԵՐ

● 15 Ապրիլ 2003ին, Լիբանանի վարչապետ Բաֆիք հարիրի հրաժարեցաւ իր պաշտօնէն: 16 Ապրիլին ան վերստին նշանակուեցաւ վարչապետ եւ 17 Ապրիլին կազմեց նախարարաց նոր խորհուրդը, որ դարձեալ կը բաղկանայ 30 նախարարէ: Նախարար Սեպուհ Յովնանեան նախարարաց նոր խորհուրդին մէջ դարձեալ երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար է:

● Միացեալ Նահանգներու նախագահ Ճորճ Պուշ 2 Մայիսին աւարտած յայտարարեց Իրաքի դէմ պատերազմը:

Դաշնակից ուժերը դժուարութեան մատնուեցան, երբ խուճանը կողոպտեց պալատներ ու այլ վայրեր: Դժբախտաբար կողոպտուեցան նաեւ թանգարանները եւ կորսուեցան շուրջ 7000 տարուան հնութիւն ունեցող թանկագին եւ պատմական իրեր:

Իրաքի մէջ հաստատուեցաւ ամերիկեան քաղաքային իշխանութիւն, որ կը փորձէ կանոնաւորել երկիրը եւ կազմակերպել մարդասիրական օգնութիւնները:

● Քոփենհակընի մէջ վերջերս տեղի ունեցաւ եւրոպական խորհուրդի ժողովը, որ որոշում տուաւ 1 Մայիս 2004ին տասը նոր անդամներ ընդունիլ եւրոպական Միութեան մէջ: 10 երկիրներն են Էսթոնիա, Լատվիա, Լիթվանիա, Լեհաստան, Չեխիա, Սլովաքիա, Բուլղարիա, Սլովենիա, Մալթա եւ Կիպրոս:

● Մինչեւ Ապրիլի վերջը ՍԱՐՍէն վարակուողներու թիւը 30 երկիրներու մէջ հասաւ շուրջ 7000ի:

Գիտնականները կրցան յայտնաբերել, որ ՍԱՐՍի պատճառը քորոնաճահրի մէկ տարբերակն է, սակայն անոնք կ'ըսեն, որ տակաւին կանուխ է վերջնական եւ ճշգրիտ պատուաստի կամ դեղի մասին խօսելու:

Բետաքրթրական է, որ Ճափոն վերձ է այս հիւանդութենէն: Բաւանաբար այս մէկը արդիւնք է Ճափոնի մէջ տարածուած յաճախ ձեռք լուալու սովորութեան:

Լիբանանի օդակայանը եւս կանխագուշական միջոցներու դիմած է ՍԱՐՍի տարածումը կանխարգիլելու համար:

● Պաղեստինեան ինքնավար Մարզի նոր վարչապետ նշանակուեցաւ Մահմուտ Ապպաս, որ ծանցուած է նաեւ Ապու Մալէն անունով: Ան կազմեց նաեւ իր նախարարաց խորհուրդը:



ԵՐԵՒԱՆԵՐԸ ԿՐ ԳԾԵՆ...

Սեղաններու շուրջ խումբ-խումբ հաւաքուած տարբեր տարիքի մանուկներ կը մրցին՝ գծելու համար օրուան լաւագոյն նկարը: 5-8 տարեկան այս գծագրիչները առտու կանուխ հաւաքուած էին համապայինի «Թորոս Ռոսլին» կերպարուեստի դպրոցը՝ պատրաստ իրենց ներկի տուփերուն հետ աշխատանքի սկսելու:

Համապայինի «Թորոս Ռոսլին» կերպարուեստի դպրոցը կը կազմակերպէ գծագրութեան մրցումներ, որոնց առաջին բաժինը տեղի ունեցաւ Ծաբթ, 10 Մայիսի առաւօտեան ժամը 9:00-12:00, համապայինի «Վասպուրական» սրահին մէջ: Մրցումին մասնակցող փոքրիկ արուեստագէտները ընտրեցին երկու նիւթերէն մէկը՝ «Տարեդարձ մը» կամ «Կախարդական անտառը»:

Վաղը՝ Ծաբթ, 17 Մայիսին կարգը պիտի գայ քիչ մը աւելի մեծ գծագրիչներուն: 9-12 եւ 13-17 տարեկան մանուկներ ու պատանիներ դարձեալ պիտի հաւաքուին «Վասպուրական» սրահ, «վին-վին» իրենց ներկերով եւ մրցին՝ գծելով իրենց նախասիրած նիւթը:

Գծագրութեան այս մրցումին վերջին հանգրուանը Ծաբթ, 23 Մայիսն է, երբ տեղի պիտի ունենայ յատուկ հանդիսութիւն մը: «Վասպուրական» սրահին մէջ պիտի յուլցադրուին բոլոր գծագրութիւնները եւ պիտի բաժնուին մրցանակները: Անշուշտ բոլորդ ալ կրնաք երթալ եւ դիտել ձեր եւ ձեր ընկերներուն գծածները:



...ՆԱԵՒ Կ'ԵՐԳԵՆ ՈՒ ԿՐ ՊԱՐԵՆ



Ամէն գարնան համապայինի «Կարկաչ» մանկապատանեկան երգչախումբը եւ «Գայիանէ» մանկապատանեկան պարախումբը կը ներկայացնեն ամբողջ տարուան իրենց աշխատանքին արդիւնքը՝ երգելով ու պարելով:

Այս տարի եւս անոնք պիտի ունենան իրենց ելոյթները: Անցնող օրերուն արդէն իսկ «Կարկաչ»ը տուաւ աշակերտական երկու ելոյթներ, որոնց ներկայ գտնուեցան լիբանանահայ դպրոցներու աշակերտներ:

Յառաջիկայ օրերուն բոլորս պիտի վայելենք մանուկ ու պատանի արուեստագէտներուն ձիրքերը: Վաղը՝ Ծաբթ, 17 Մայիսի երեկոյեան ժամը 7:00ին, Պէյրուսի Ամերիկեան համալսարանի «Էսէմպլի Դոլ» սրահին մէջ «Կարկաչ»ի մանուկ ու պատանի երգիչները պիտի կարկաչեն նոր երգերով, իսկ Մայիսի վերջին երկու եւ Յունիսի առաջին շաբաթավերջերուն «Գայիանէ»ի պարողները պիտի թնդացնեն «Մոննօ» թատերասրահին բեմը:

ՃԵՄԱՐԱՆԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԸ

Երկար փորձերէ, կրօնականներէ կրկուելէ ու մեծ ծիգերէ ետք վերջապէս հասաւ Չորեքշաբթի, 16 Ապրիլ 2003 թուականը: Այդ թուականին «Յակոբ Տէր Մելքոնեան» թատերասրահին մէջ տեղի ունեցաւ երաժշտական ունկնդրութիւն մը՝ շնորհիւ Ճեմարանի ճնողական յանձնախումբին եւ տիկ. Քրիստինին, որոնք առիթը ստեղծեցին աշակերտ-աշակերտուհիներու, որպէսզի սիրով ու մեծ հաճոյքով մեր մակարդակին համապատասխան երաժշտութիւններ նուագելով, մեր ճնողները ուրախացնենք եւ մեր անունը բարձր պահենք:

Երաժշտական յօրինումներու ունկնդրութեան ասարտին, Ճեմարանի տնօրէնը՝ պրն. Տիգրան Ճինպաշեան, բեմ բարձրացաւ եւ աշակերտները շնորհաւորելէ ետք, մէկ-մէկ հրաւիրեց բոլոր նուագողները եւ անոնց յուշանուէրներ յանձնեց:



Չենք մոռնար նաեւ Ճեմարանի ճնողական յանձնախումբին ու նախակրթարանի պատասխանատուին գնահատելի նախաձեռնութիւնը եւ շնորհակալութիւն կը յայտնենք բոլորին, ինչպէս նաեւ՝ մեր ընկերներուն, որոնք եկան, մեզ լսեցին եւ երկա՛ր-երկա՛ր ճափահարեցին:

Բալիկ Լատոյեան,
Ձ. դասարան
Մելանքթոն եւ հայկ
Արսլանեան Ճեմարան



ՊՈՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԽԱՂԱՊՈՒԹԵԱՆ ՆՈՊԷԼԵԱՆ ՄՐՑԱՆԱԿԸ

Ամեն տարի աշխարհին խաղաղության համար աշխատանք տարած անհատի մը կը տրուի խաղաղության Նոպելեան մրցանակը: Սակայն գիտէ՞ր, թէ երեխաներն ալ ունին իրենց յատուկ խաղաղության Նոպելեան մրցանակը: Այս մրցանակը կը տրուի այն անձին, որ ամենէն շատ աշխատած է աշխարհի տարածքին մանուկներու իրաւունքները պաշտպանելու համար: Իսկ ՌԿ կ'ընտրէ մրցանակակիրը. զանազան երկիրներու մանուկներէ բաղկացած դատական կազմ մը:

«Ուորլտլի Էքսպրեսը» փրայմ ֆոր տը ռայթի աֆ տը չայլտ» մրցանակին այս տարուան անանացանկին մաս կը կազմէին Մակի Պարանքիթը, որ Պուրունտիի մէջ պատերազմէ փրկած է մանուկներ, Ճէյմս Ակուէր, որ Սուտանի մէջ մանուկներ ապատած է ստրկութենէ եւ պրապիլեան «Փասթորալ Ծառիանչա» կազմակերպութիւնը: 26 երկիրներէ 288 հազար երեխաներ մրցանակը տուած են Ճէյմս Ակուէրի:

ՓԱՅԼՓԼՈՂ ԷՅՖԷԼԻ ԱՃՏԱՐԱԿԸ



Յառաջիկայ Յունիսին էյֆէլի աշտարակը դարձեալ պիտի շողշողայ լոյսերու մէջ: Յունուարէն սկսեալ մագլցողներու բանակ մը 20,000 լոյսեր կը վետեղէ էյֆէլի ամբողջ երկայնքին: Լոյսերը տասը տարի շարունակ պիտի վառին իւրաքանչիւր ժամուան մէջ 10 վայրկեան, մայրամուտէն մինչեւ կէս գիշերը անց:

2000 թուականի լուսաւորումէն ետք էյֆէլը վերստին լուսաւորելու որոշումը տուաւ Փարիզի քաղաքապետը, երբ փարիզիցիները գանգատեցան, որ լուսաւորումը վերջնական չէր եւ միայն իրագործուած էր 2000 թուականի հանդիսութիւններուն համար:

Ծրագիրը կ'արժէ շուրջ 5 միլիոն ամերիկեան տոլար, սակայն պատասխանատուներուն կարծիքով էյֆէլի գեղեցկութիւնը արժանի է այդ ծախսին:

ԲԱՐԻ ՏԱՐԵՊԱՐՁ Ս. ՓԵՅԵՐՍՊՈՒՐԿԻՆ



Յառաջիկայ Մայիս 23 - Յունիս 1ին, Ռուսիոյ Ս. Փեթերսպուրկ քաղաքին մէջ պիտի տօնուի քաղաքին 300րդ տարեդարձը: Մէկ շաբթուան ընթացքին տեղի պիտի ունենան հետաքրքրական մշակութային եւ այլ ձեռնարկներ:

ՏՐԻ ԲԵՐԻ ՓՈԹՔՐԸ

Բերի Փոթքրի Տրի գիրքը՝ «Բերի Փոթքրը էնտ տի օրտըր աֆ էօնիքս» վերջապէս լոյս պիտի տեսնէ 21 Յունիսին:

Բերի Փոթքրի գիրքերէն զարդ 190 միլիոն օրինակ տպուած է շուրջ 55 լեզուներով:

ԲԱՆՃԱՐԵՂ ՊԱՏԱՆԻՆ

Կրեկըրի Բոպըրթ միայն 14 ամսու էր, երբ թուաբանութեան խնդիրներ կը լուծէր: 2 տարեկանին ան կը կարդար եւ չափահասներուն խօսակցութեան սխալները կը սրբագրէր: Ան երկրորդական վարժարանը աւարտեց 9 տարեկանին, իսկ 31 Մայիսին պիտի ստանայ ուսողութեան համալսարանական վկայական:

Կրեկըրի Բոպըրթ մտադրած է դոկտորայի աստիճաններ ունենալ ուսողութեան, անջրպետային ճարտարագիտութեան, քաղաքական գիտութիւններու եւ կենսաբժշկական ճարտարագիտութեան: Ան պիտի շարունակէ նաեւ իր պայքարը վայրագութեան դէմ եւ երեխաներու իրաւունքներու պաշտպանութեան համար իր աշխատանքները:

Կրեկըրի Բոպըրթ միայն տասներեք տարեկան է: Բետաքրքրական կեանք մը, այնպէս չէ:

ՆՈՐ ՄՈՄԻԱ ՄԸ

Վերջերս, եգիպտացի հնագէտներ եգիպտոսի մայրաքաղաք Գահիրէի մօտ գտան 5000 տարուան հնութիւն ունեցող մոմիա մը, որ «կը քնանար» տախտակէ դագաղի մը մէջ:

Բին եգիպտացիները կը հաւատային, որ մարդկային մարմինը մահէն ետք պէտք է անփոփոխ մնար: Այդ պատճառով ալ, զանազան նիւթեր գործածելով, անոնք կը զմռաէին մեռած մարմինը:



ՄՈՌՏՄԱՍԱՊԱԿԱՆ

31 ՄԱՅԻՍ. ԱՌԱՆՑ ԾՌԱԽՈՏԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ

«Առողջության լրջօրեն կը վնասէ». այս յայտարարության մենք կը հանդիպինք ծխախոտի բոլոր տուփերուն վրայ եւ ճանուցումներուն տակ:

Ծխախոտին վնասները շատ են եւ կ'ազդեն ամբողջ մարմնին՝ անցնելով ուղեղէն, սրտէն, թոքերէն եւ երակներէն (քաղցկեղ, սրտի հիւանդութիւն, շնչառութեան դժուարութիւն եւ այլն): Տակաւին կան ծխախոտին պատճառով բնութեան հասած վնասները (անտառներու փծացում՝ ի նպաստ ծխախոտի մշակման, հողի տկարացում, նետուած ծխախոտի մնացորդներու պատճառով անտառներու հրդեհներ եւ այլն):

Ծխելը շատ դիւրաւ սովորութեան կը վերածուի, սակայն դժուար է անկէ ձերբազատիլ: Բետեւաբար, աւելի դիւրին չ'է բնաչծխել:

ԻՆՉՊԷՍ Կ'ԱԶԴԷ

Ծխախոտին մէջ գտնուող նիքոթինը կ'ազդէ ուղեղին վրայ: Ան ուղեղը կը գրգռէ եւ կը յառաջացնէ հաճոյքի պայծառ մը: Այսպիսով, ծխախոտը շուտով կը դառնայ մոլութիւն մը: Այս ձեւով կը սկսի կախեալ վիճակը, եւ նիքոթինին պատճառով ծխախոտը կը դառնայ թմրեցուցիչի տեսակ մը:

ՉԾՈՒՈՂՆԵՐՆ ԱԼ

Դժբախտաբար ծխախոտը միայն ծխողներուն չէ, որ կը վնասէ: Անոնց շուրջինները եւս կրնան անոր հասցուցած վնասներուն ենթակայ ըլլալ:

Գիտէ՞ր, թէ երբ շատ ծխողի մը ներկայութեան կը գտնուի ոչ օդասուն սենեակի մը մէջ, կը շնչես օրական 5 - 29 ծխախոտի համապատասխանող ծուխ:

Բետեւաբար յաջորդ անգամ, երբ մօտը



գտնուող անձ մը ծխելու սկսի, մի՛ վարանիր անոր ըսելու, թէ ծուխը քեզ կը նեղացնէ եւ խնդրելու, որ ծխախոտը մարէ:

Ծխող թէ չծխող՝ բոլորս ալ պէտք է կրենանք ապրիլ՝ յարգելով մեր շուրջիններուն առողջական իրաւունքները եւ մեր կենսոլորտին մաքրութիւնը:

ԳԻՏԷՐ, ԹԵ

Ծխախոտը կը պատկանի գետնախնձորին, լոլիկին եւ փեթիւնիայի մեծ ընտանիքին: Սակայն ան այս ընտանիքին միակ անդամն է, որ նիքոթին կը պարունակէ:

Քրիստափոր Բոլոմպոսի արշաւանքներէն ետք, 1492 թուականին է, որ նաւաստիները Քուպայէն իրենց հետ Սպանիա կը բերեն ծխախոտը:

Նիքոթին անունը եկած է 16րդ դարուն ֆրանսայի թագաւորին Լիպոնի մէջ դեպան ժանի Նիքոյի անունէն:



ՍԳՏՄԱՍՔԱՆՈՒՄ

ՔԱՆՆԻ ԾԱՐԺԱՊԱՏԿԵՐԻ ՓԱՌԱՏՕՆԸ

Ծարժապատկերի աշխարհին մէջ տարին քանի մը անգամ տեղի կ'ունենան մեծ փառատօներ, ուր կը հաւաքուին տարբեր երկիրներէ եկած բեմադրիչներ ու դերասաններ: Անոնք քանի մը օրերու ընթացքին կը ցուցադրեն իրենց պատրաստած վերջին ժապաւէնները, կը մասնակցին մրցումներու եւ կը ստանան մրցանակներ:

Այս փառատօներուն ամէնէն կարեւորներէն է Քաննի Ծարժապատկերի փառատօնը, որ ամէն տարի տեղի կ'ունենայ Մայիսին, Ֆրանսայի Քանն քաղաքին մէջ: Այս տարի Քաննի Ծարժապատկերի փառատօնը պիտի տօնէ իր 56րդ տարեդարձը:

Քաննի Ծարժապատկերի փառատօնը ընդհանրապէս կը տեւէ տասը օր: Այս տարի ան տեղի կ'ունենայ Մայիս 14 - 25ին:

Այս փառատօնը ունի քանի մը բաժիններ: Կան կարծ ժապաւէններու երկար ժապաւէններու, ինչպէս նաեւ՝ մրցումի մասնակցող ժապաւէններու բաժինները:

Տարբեր երկիրներէ հաւաքուած դերասաններէ, բեմադրիչներէ ու գրողներէ կազմուած ինը հոգինոց դատական կազմը կը դիտէ մրցակցութեան ներկայացած ժապաւէնները եւ անոնց լաւագոյններուն կու տայ յատուկ մրցանակներ: Քաննի Ծարժապատկերի փառատօնին ամէնէն կարեւոր մրցանակը կը կոչուի «Փալմ տ'Օր» կամ «Ոսկեայ Դափնի», որ կը տրուի փառատօնին մասնակցած լաւագոյն ժապաւէնին:



ՍԱՏՊԵՐ

ԼՈՒՐԵՐ

● Բոլիվուտի նշանաւոր դերասան Տասթին Բոֆմըն, որ արժանացած է երկու «Օսքար»ներու («Քրէյմըր Քրէյմըրի դէմ» (1979) եւ «Բէյն մէն» (1988)), վերջերս Սան Ֆրանսիսկոյի Միջազգային փառատօնին ստացաւ «Փայլուն խաղարկութեան, անկախութեան եւ ամբողջականութեան» մրցանակին:

● Մատոնայի նոր ձայնապլանակը՝ «Ամերիքըն Լայֆ», բաւական քննադատութեան արժանացաւ քննադատներու կողմէ: Ծատեր վայն որակեցին 20 տարուան անոր երաժշտական կեանքին ամէնէն ծախող գործը: Իսկ առաջին երգին ժապաւէնը շուկայէն վերցուեցաւ, որովհետեւ անոր մէջ Մատոնա ձեռնառումը կը նետէր Միացեալ Նահանգներու նախագահ Ճորճ Պուշի նմանակին վրայ:

● Քէթրին Ջեթա-Ճոնս եւ Մայքըլ Տակլըս բախտաւորուեցան աղջնակով մը՝ Քերիս Ջեթա Տակլըս: Ջոյզը արդէն իսկ ունի մանչ պաւակ մը՝ Տիլըն Մայքըլ Տակլըս, որ ծնած է 8 Օգոստոս 2000ին:



ՏՈՒՄ

ԻՆՉ ԿԸ ԱՏԱԾԵՍ

10-15 բառով կարծիքդ տո՛ւր հետեւեալ նիւթին մասին: Պատասխանները հասցնել «ԱԶԴԱԿ»-ի խմբագրատուն մինչեւ հինգշաբթի, 12 Յունիս 2003:

Մարդիկ իրենց ուլած տեղը ճիշդու իրատունք ունին:

Նախորդ հարցումին կարծիքները


Ո՛չ, համաձայն չեմ, որովհետեւ կարգ մը անասուններ շատ հապուազիւտ են աշխարհի վրայ եւ եթէ մասնակցին պատերազմին, անոնց թիւը կրնայ նուազիլ: Փաթիլ Տումանեան, 10 տարեկան

Այո՛, համաձայն եմ: Լեռնայի Պարաբադի պատերազմին շունները նամակ տանելով կ'օգնէին հայերուն: Վիքի Գալուստեան, 10 տարեկան


Ո՛չ, համաձայն չեմ, որ անասունները օգտագործուին պատերազմի ատեն, որովհետեւ պատերազմը ինքնին սխալ եւ չար երեւոյթ մըն է: Ծիշդ պիտի ըլլայ այդ մեղքին մէջ չթաթխել անմեղ անասունները: ԲԱԹՐՈՆ ՅԱԿՈԲԵԱՆ 9 տարեկան

Ժամանցին պատասխանները լոյս պիտի տեսնեն «Ազդակ»-ի ճաբաթ, 17 Մայիս 2003ի թիւին մանկապատանեկան էջին մէջ:

ԻՆՉԱՐԱՆ ԹԻՒ 13Ի ԾԱՌՈՂԸ
Բարբարան թիւ 13ի շահողը Յոյեր Կոտալպեան (10 տարեկան «Բայ Կաթողիկէ Սրբունի Ազնէս վարժարան»էն) շահեցաւ անցեալ ամսուան մրցումը: Ան իր նուէրը կրնայ ստանալ «Ազդակ»էն, «Ճաղկոյեան» կեդրոն:



Կէտերը իրարու միացո՛ւր՝ 1-41 գտնելու համար պահուած պատկերը:



Կրնաս այս գաւաթները շարել ամէնէն պստիկէն ամէնէն մեծը:

	18	
14	10	
		16

Ամբողջացուր տախտակը. հորիզոնական եւ ուղղահայեաց շարքերուն գումարը = 30:

ԵԿԷՔ ԾԱՌԱԴՐԵՆՔ

- Ծարադրութեան մրցումը տեղի կ'ունենայ Կիրակի, 1 Յունիսին, «Յակոբ Տէր Աելթոնեան» թատերասրահին մէջ, առաւօտեան ժամը 10:000-12:30:
- Բոլոր մասնակցողները պէտք է սրահ գտնուին ժամը 9:30ին:
- Մասնակցողները պէտք է իրենց հետ ունենան իրենց գրեական պիտոյքները:
- «Եկէք շարադրենք»-ի արդիւնքները պիտի յայտարարուին «Պստիկ-Մստիկ»-ի Ուրբաթ, 20 Յունիսի թիւով:



ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԹՈՐՈՍ ՌՈՍԼԻՆ ԿԵՐՊԱՐՈՒԵՍԻ ԴՊՐՈՑ
ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՄԻՋ - ԴՊՐՈՑԱԿԱՆ
ԳԾԱԳՐՈՒԹԵԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ - ՄՐՑԱՆՔ 2003



Պատուոյ հիւր՝ ՏԻԿԻՆ ՆԻՔՈԼ ՄԱԼՀԱՍԷ - ՀԱՐՖՈՒՇ
A.L.B.A.ի կերպարուեստի դպրոցի տնօրէնուհի, դասատու գեղանկարիչ,
արուեստի քննադատ «La Revue du Liban»-ի

Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 23 Մայիս 2003ին, երեկոյեան ժամը 6:00ին,
Համազգայինի Ն. Փալանճեան ձեմարանի «Վասպուրական» սրահին մէջ,
Չորաք էլ Պլաթ - Պէյրուս:
Ցուցահանդէտը բաց է մինչեւ Չաբաթ, 24 Մայիս 2003,
կէսօրէ ետք ժամը 2:00էն 8:00ը:

Sponsorise par: MOUAWAD - JAL EL DIB LUKAS - MAIMERI

ԻՆՉԱՐԱՆ ԹԻՒ 14

- 1.- Տո՛ւր երեք ոչ կառավարական կազմակերպութիւններու անուններ: -----
- 2.- Ճէմպ Ակուէր ինչո՞ւ ստացաւ մանուկներու խաղաղութեան նուաբէան մրցանակը: -----
- 3.- Ո՞ր երկրին մէջ տեղի կ'ունենայ Քաննի միջազգային փառատօնը: -----

Ամսուան հարցումին կրնան մասնակցիլ 6էն 12 տարեկան աշակերտները: Կտրօնը ամբողջացնելէ ետք վայն հասցնել «ԱԶԴԱԿ»-ի
խմբագրատուն: Յաջորդ թիւով պիտի յայտարարուի մրցումը շահողին անունը: Ան պիտի ստանայ նուէր մը:
Անուն - Մականուն -----
Վարժարան -----
Ծննդեան թուական -----
Բեռաձայնի թիւ -----



ՀՊՈՒՑԱՄԱՆ

Միջ -

«ՄԱՅՐԵՐՈՒ ՕՐ»

Նախապիրաճ տօնս Մայրերու օրն է: Միս տօները կու գան, կ'անցնին, ուրախութիւն կը պատճառեն, որովհետեւ նուէրներ կը ստանանք, առանց սակայն մտածելու, որ մենք ալ բան մը նուիրենք ուրիշին... Բայց այս տօնը ինձի մտածել կու տայ, թէ ես ինչ պիտի նուիրեմ այն անձին, որ մեզի համար ամէն օր Վոհոդութիւններ կ'ընէ, կը պտտցնէ, դասընկեր - դասընկերուհիներու հետ ակնի կը վարուի, մեր ուրախութեան մասնակից կ'ըլլայ, մեր նեղութիւնները կը բաժնէ, կը խրատէ եւ մեր սխալները սիրով կ'ընդունի ու կը սրբագրէ:

Բայ մօր գործը շատ է եւ պարտականութիւնը՝ մեճ, նախ՝ պալակներուն հանդէպ, ապա՝ ազգին, եւ այսպիսով յառաջ կու գայ աւելի վարգայած եւ գիտակից սերունդ մը, ազգ մը:

ԱՌՕ Մ.

Մ. եւ Բ. Արսլանեան
Ե. դասարան

ԳԱՐՈՒՆ

Գարուն, գարուն,
սիրուն գարուն,
եկուր դուն մեր մօտ,
Բաց մեր ճաղիկները եւ թող
Ծառերը ճաղկին:
Գարուն, գարուն:

Գարունը կանաչ ու գոյնզգոյն,
Ծիծեռնակները եկան մեր քով,
Իրենց ուրախ շարժումներով,
Բաշխեցին մեզ ուրախութիւն:
Գարուն, գարուն:

Գարուն եկաւ, թռչունը երգեց,
Թիթեռնիկներ եկան գոյնզգոյն,
Գարուն եկաւ, խոտեր ելան,
Եւ ճաճկեցին մեր աշխարհը:
Գարուն, գարուն:

ԼԻԼԻԹ ՍԱՐԱՖԵԱՆ

Մ. եւ Բ. Արսլանեան ճեմարան
Դ1 դասարան

ՆԱԽԱՍԻՐԱԾ ՏՕՆՍ

Իմ նախապիրաճ տօնս Մայրերու տօնն է: Ես շատ կը սիրեմ Մայրերու օրը, որովհետեւ մօրմէս աւելի թանկագին մայր չկայ աշխարհիս երեսին:

Մայրս իր կեանքը կը կոհէ, որպէսզի լաւագոյն ձեռքով մեճցնէ եւ դաստիարակէ զիս:

Մայրս բարի խօսքերով, խրատներով, անկեղծ ու մաքուր հոգիով կը մեճցնէ զիս, որպէսզի կեանքի մէջ սիրուած, քաղաքավար, յարգելի, ուսեալ եւ պարկեշտ մարդ դառնամ:

ԱՌՕ ՍԱՍՈՒԷԼԵԱՆ

Մ. եւ Բ. Արսլանեան ճեմարան
Ե. դասարան

Ձեր գրութիւնները կամ նամակները
կրնաք ուղարկել՝
bezdig_mezdig@hotmail.com
կամ յանձնել՝ «ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ»-ի
խմբագրութեան, «ԱՁԴԱԿ», «Ծաղկոյեան» կեդրոն

Նախապէս «Պպտիկ-Մպտիկ»ը նամակ ստացած էր Աթէնքի Ազգ. Սոփիա Յակոբեան վարժարանի 5րդ դասարանի աշակերտներէն: Վերջերս ան դարձեալ ստացաւ մեճ թիւով նամակներ, որոնցմէ երեքին տեղ կու տանք այստեղ:

Սիրելի «ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ»,

Իմ անունս Անի Տէմիրճեան է: Բոլորին կողմէ կ'ուզեմ ըսել, որ ձեր թերթը շատ աղուոր եւ հետաքրքրական է:

Ծատ բաներ ունիմ ըսելիք, բայց ըսեմ միայն, որ մեր դասարանին մէջ ջրճաղիկը պտոյտներ կ'ընէ: Այս պատճառով երեք հոգի մեր դասարանէն նամակ չեն գրած: Տունը պառկած են:

Ծատ տխուր է այս լուրը եւ կը յուսամ, որ դուք ալ ձեր պպտիկ եղած ատենը ջրճաղիկ անցուցած էք:

ԱՆԻ ՏԵՄԻՐՃԵԱՆ
Ե. դասարան

Սիրելի «ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ»,

Մենք դասարանով գացած էինք Ֆիլոսոփիո: Դասարանով բարձրացանք Ֆիլոսոփիոյ բլուրը: Ծատ սիրուն ճաղիկներ կային:

Մտանք հին եկեղեցի մը, քիչ մը մուտք, բայց շատ հաճելի էր: Մենք դասարանով բլուրին արահետներէն քալեցինք մինչեւ գագաթ: Բոն տեսանք Ֆիլոսոփիոյ արձանը: Յետոյ գացինք եւ քարերու վրայ նստած հանգստացանք: Դասարանով պահուողտուք խաղայինք:

Ես ալ կրիայ մը գտայ եւ փրկեցի: Կրիան կայնած էր ինձի համար փոքր, բայց իրեն համար խոր ձորի մը ճայրը:
Ես շատ սիրեցի Ֆիլոսոփիոն:
Եւ մեր դասարանը ուրախ վերադարձաւ դպրոց:

ԴԱԻԻԹ ԳԱՐՐԻԷԼԵԱՆ
Ե. դասարան

Սիրելի «ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ»,

Նախորդ Ձորեքշաբթի մենք առինք մեր վիճակացոյցները: Ծատ մայրիկներ դասարանին առջեւ կը սպասէին, եւ մենք մտահոգ էինք ինչ թիւ պիտի առնէինք: Դուք առիք ձեր նիշերը: Ինչպէս կ'անցընէք ձեր դպրոցը: Դուք հոն լաւ կ'աշխատիք:

Ձեր դպրոցը աղուոր խաղեր կը խաղաք:
Երբ կարդայի ձեր թերթը շատ սիրեցի:
Բարեկենդանին լաւ կ'անցնէք: Բարեկենդանին լաւ խաղեր կը խաղաք. բարեկենդանին խամաճիկ ունիք: Վիճակացոյցի թիւերը շատ հետաքրքիր են, որովհետեւ ցոյց կու տան ինչպէս կ'աշխատիս դասերուդ մէջ:

Սիրով՝
Քրիստինէ Խտրեան
Ե1 դասարան

●Ո՛չ, անասունները պէտք չէ օգտագործուին պատերազմի ատեն, որովհետեւ անմեղ են: Եթէ անոնք սատկին բնութեան հաւասարակշռութիւնը կը խախտի:
ԿՐԷՅՍ ՏԵՄԻՐՃԵԱՆ, 11 տարեկան

●Բամաձայն եմ, որ անասունները օգտագործուին պատերազմի ատեն, որովհետեւ անասունները օգտագործելով՝ երկրին մէջ վետեղուած ռումբերը եւ անոնց վտանգը կը պակսին:
Կարինէ Պէրպէրեան, 11 տարեկան



ԴՊՐՈՑԱԿԱՆ

ՄԻՋ -

Սիրելի «Պատիկ - Մպտիկ».


Մենք Ազգ. եղիշտ Մանուկեան քոլեճի Բ1 դասարանի աշակերտներն ենք: Ճատ կը սիրենք ձեր թերթը եւ ամէն ամիս անհամբեր կը սպասենք ունենալու մեր օրինակները:

Անցեալ ամիս մեր դասարանը ունեցաւ երկու գեղեցիկ մկնիկներ:

Միասնաբար որոշեցինք ճերմակը կոչել «Պատիկ», իսկ մոխրագոյնը՝ «Մպտիկ»: Ամէն օր մեզմէ մէկը իրեն հետ տուն կը տանի, կը կերակրէ պանոնք, կը մաքրէ վանդակը, ապա կը գրէ իր տպաւորութիւններն ու կը նկարուի անոնց հետ: Այսպիսով, մենք պիտի ունենանք մեր գիրքը Պատիկ - Մպտիկին մասին, մեր նկարներով ու գրութիւններով:

Անհամբեր սպասելով ձեր յաջորդ թիւին՝


Բ1 դասարանի աշակերտներ



Վիգի Գալուստեան, Դ. դասարան, Բայ Աւետ. Խորոսեան վարժարան



Վրէժ Աւետիսեան, Զուարթնոց կեդրոն



Վահէ Խաչճեան
Զուարթնոց
կեդրոն

★ ՈՒՃԱԴՐՈՒԹԻՒՆ ★

Բոլոր այն աշակերտները, որոնք կը փափաքին գծագրութիւններ դրկել «ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ»ին, որպէսզի կարելի ըլլայ նկարը ամբողջութեամբ արտատպել, թող հաճին նկատի ունենալ առաւելագոյնը հետեւեալ չափը.

29.5 cm x 21 cm: